**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 15 սեպտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Հենրիկ Պողոսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Հենրիկ Պողոսյանը 2011թ. սեպտեմբերի 2-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի՝ իրավակիրառական պրակտիկայում վերջինիս տրված մեկնաբանությամբ, համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 1-ին հոդվածի, 3-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերի, 8-րդ հոդվածի 1-ին մասի եւ 14.1.-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Նախ՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթը չի բավարարում օրենսդրական ակտերին առաջադրվող հստակության և ճշգրտության պահաջները, ավելին՝ հակասում է իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքին, քանի որ օրենսդիրն

ամրագրելով «**պահանջներ**» եզրույթը՝ որեւէ կերպ չի հստակեցրել դրանց իրավական ստույգ սահմանները, իսկ դատարանների կողմից՝ իրավակիրառական պրակտիկայում իրավանորմին տրված մեկնաբանությամբ սահմանափակվել է այդ պահանջների կոնկրետ շրջանակը: Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմն իր բովանդակության մեջ ներառում է բաժնետիրոջ ցանկացած պահանջ:

Դիմողը պնդում է, որ արդյունքում խախտվել է իր՝ ՓԲԸ-ում բաժնետոմսերի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ դիմողի կողմից պահպանվել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով սահմանված ընդունելիության պայմանները, իսկ սույն դիմումն ըստ ձեւի համապատասխանում է օրենքով նախատեսված ընդհանուր պահանջներին, ուստի առկա չեն գործի քննությունը մերժելու՝ օրենքով ամրագրված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ, 69-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Քաղաքացի Հենրիկ Պողոսյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

15 սեպտեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-10